

ՀՆՁՍԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ
ՄՈՒՐԱԴ ԲԵՅԻՆ.

Ձեր «Միջան» լրագրում, որ ութ տարի դուրսից ռենեսանսայից յետոյ Կ. Պոլսում, այսօր, հալածվելով սուլթանի կողմից, ստիպված սկսել էք հրատարակել Ազիպոսի ազատ հոգի վրայ, դուք առաջ էք բերում տաճիկ սահմանադրականների ծրագիրը, քաղաքական գաղափարներ: Այս անգամ լրագրի հենց առաջին համարում, որ լոյս ահաւ Կայիրէյում, յանուն ազատութեան հրաւեր էք կարգում հայ յեղափոխականների միանալ տաճիկ սահմանադրականների հետ և միահամուռ ոյժերով կործանել սուլթանական միապետութիւնը, որ դուք ասում էք նոյնքան, որքան և մենք, և վերակազմել ամբողջ օսմանեան երկիրը՝ սահմանադրական ընդարձակ ու արմատական հիմունքների վրայ: Գուք համոզված էք, որ հայկական խնդրի լուծումը հնարաւոր ու գործնական կը լինի և դուքս կը վայ ներկայ դժուար արգելքներից, եթէ դրվէ մէկ աւելի ընդարձակ հոգի վրայ, եթէ նա ներկայացվէ իրրեւ մի մասն օսմանեան երկրի վերակազմութեան խնդրի, որն էլ, այս խնդրին, իր կողմից պահանջում է մի շուտափոյթ լուծում: Գուք հրաւեր էք կարգում մեզ աշխատել ձեզ և տաճիկ սահմանադրականների հետ միասին այդ ընդհանուր վերակազմութեան համար, և ուզում էք ապացուցել, որ թիւրք հասարակութեան մէջ կան լուսաւորված անձեր, կան մինչև իսկ բաղմամբիւ սահմանադրականներ, որոնք պարզօրէն տեսնում են իրանց երկրի ու ժողովրդի անկումը և մօտալուստ կորուստը, ուր մղում է նրանց սուլթանների կառավարութիւնը: Գուք հաւատացնում էք, որ թիւրք ժողովուրդն ինքը զգլած է այդ կառավարութիւնից, քանի որ նրա, թիւրք ժողովրդի, վիճակը թէ անտեսական և թէ քաղաքական կողմերով նոյնքան անկած է, որքան հայինը, որքան և իւրաքանչիւր ազգի, որ օսմանեան լծի տակ է: Յետոյ խօսում էք վերջին կոտորածների մասին և յայտնելով ձեր խորին ցաւը դրանց նկատմամբ և ձեր համակրանքը դէպի հայ ժողովուրդը, դուք տխրութեամբ և անկեղծ շիտակութեամբ կշտամբում էք հայ հայրենասէրներին, որ փորձ

չարին տաճիկ առաջագէտ տարրերի հետ միանալու և նրանց հետ միասին գործելու, այլ, ընդհակառակը, շարունակ զրգռեցին հայերի ամենախիստ ատելութիւնը դէպի թիւրք ժողովուրդն իսկ, խառնելով սուլթանի կառավարութիւնն այդ թշուառ ու աղէտ բաղմութեան հետ:

Ներկայիս մենք, հայ յեղափոխականներս, տալիս ենք ձեզ մեր պատասխանը:

Ձը նայած, որ այս արիւնալի ժամանակներս, երբ մեր թշուառ ժողովուրդն այնպիսի անուղղելի հարուածներ ստացաւ թիւրք ժողովրդային խուժանի կողմից և հայ հայրենասէրի աչքին կոյր ու զազանային ֆանատիկոսութեան մի պատկեր է միայն ներկայացնում թիւրք ժողովուրդը՝ ակամայ սա դարձած առարկայ ամեն հայի ռիսի ու ատելութեան, որ շատ դիւրին է հասկանալ, չը նայած այդ պարագային, մենք, հայ յեղափոխականներս, նրան, այդ թիւրք ժողովրդին, չենք դատապարտում: Նա ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ կոյր, դիւրաթեք, անմիտ և մոլեռանդութեան թոյլ կող ունեցող մի գործիք, որ սուլթանը կարող եղաւ զարմանալի վարպետութեամբ ու ձեռնաձուլութեամբ գործածել հայ ժողովրդի դէմ: Ժողովրդների և նոյն իսկ իրան թիւրքերայի համար կործանարար ու սպանիչ եղող այդ անուր աղէտի պատասխանատուութիւնն ամբողջովին ընկնում է միմիայն և միմիայն այն դահանգիստ դազանի վրայ: Նա իր պաշտօնի խորերից հրամաններ է արձակում իր արիւնարբու վալիներին ու պաշտօնեաներին, զօրքերին ու շէյխերին՝ զրգուել մահալեւանական ֆանատիկոսութիւնը և թիւրք ամբոխին նետել ու առաջնորդել կոտորման ձեռնարկի մէջ, խուժելով անդէն, անպաշտպան և վատաբար խաբված մի ժողովրդի վրայ: Նա այսօր մենք չենք կարող ծածկել մեր գոհունակութիւնը, որ կան տաճիկներ, որոնք զգում են այդ գոթոսային անիրաւութիւնը, որոնք և մինչ այժմ անգործ ու քնացած մընալուց յետոյ՝ վերջապէս իրանց աչքը բացին այն սոսկալի իրականութեան առջև, որ ամբողջ օսմանեան երկիրը տանում, գլորում է դէպի վիհ: Մենք չենք կարող ծածկել մեր գոհունակութիւնը, որ — թէև ուշ և միայն եղբրական ներկայացման վերջին գործողութեան մէջ — թիւրք

Հայրենասէրները վերջապէս ասպարէզ են ելնում հայրենիքի և զրա հողի վրայ ապրող ազգերի վերականգնութեան համար վճռական կռիւ մղելու, ինչպէս դուք էք յայտարարում: Սակայն, անշուշտ հայ յեղափոխական շարժման անձանք լինելու պատճառով, դուք մի կարեւոր սխալ էք անում, երբ կողմնակի կերպով հայ հայրենասէրներին մեղադրում էք նրանում, որ նրանք քարոզելով ատելութիւն—փոխարէն լոկ կառավարութեան դէմ—[Թիւրք ժողովրդի դէմ, անգիտակցաբար հող պատրաստեցին այն աղէտների համար, որ տեղի ունեցան և շարունակում են դեռ տեղի ունենալ ներկայումս: Այս դէմ մեր առաջին աւարկութիւնն այն է, որ հայերի այդ քարոզչներն այսուհանգերձ երբէք չէին կրում այն ծայրայեղ քրիստոնեատեաց ու հայատեաց մոլեռանդ, հրահրիչ ու ոճրագործական հրահանգների ու գրգռուումների ոգին, որ շարունակ արծարծվում էր մահմեդական շէյխների ու կղերի կողմից առհասարակ, այն ոգին որ և մասնաւորապէս կառավարական՝ ամենաբարձրից մինչ ամենացածր պաշտօնեաներն արծարծում էին մոլի հաճոյքով: Մեր երկրորդ աւարկութիւնն անում ենք այն ցաւը յայտնելով, թէ ինչո՞ւ արդեօք լուսաւորված թիւրքերը չը յայտնվեցան շատ աւելի առաջ, քան այժմ, քանի որ նրանք աւելի, քան մենք, գտնվում էին այն դիրքում, որ կարող կը լինէին իրանց մարդասիրական քարոզներով և ընթացքով դէթ մինչև մի յայտնի աստիճան արգելք լինել իրանց կրօնական խմբների զապանաբարոյ քարոզութիւնների աջող տարածման մահմեդական խաւերում:

Անցողակի կերպով անելով այդ երկու աւարկութիւնը, մենք դիմում ենք երրորդին:

Եթէ ճիշդ է, որ եղել են և կան իրանք իրանց հայրենասէր անուանող հայ խմբեր, որպէս և անհատ հայրենասէրներ, որ արդարեւ քարոզներով շարունակ սերմանել են ատելութիւն հայի մէջ դէպի ամեն թիւրք և ամեն թիւրքական, մահմեդական բան, ճիշդ է նոյնպէս և այն, որ միակ դործող հայ քաղաքական մարմինը, Հնչակեան Առաքելութիւնը, բացառութիւն կազմելով հայերի մէջ, ունեցել է վերոյիշածի բոլորովին հակառակ ընթացքը: Աւ քանիցս «Հնչակը» բանակռիւ է ունեցել միւսների հետ այդ խնդրի առիթով: Թիւրք հայրենասէրների երևան գալն ասպարէզի վրայ վաղուց ի վեր սպասված ու ցանկալի է եղել Առաքելութեանս կողմից: Միութիւն, կամ, աւելի ճիշդ, ընդհանուր գործակցութիւն թիւրք և հայ հայրենասէրների—Առաքելութեանս կողմից անհրաժեշտ է նկատվել ութ-ինը տարիից ի վեր, այսինքն Առաքելութեանս ծագումից ի վեր, հայ յեղափոխական շարժման սկզբնաւորութիւնից ի վեր, որ ստեղծվեցաւ նրա ջանքով: Յե-

տոյ: Այդ համագործակցութիւնը մեր կողմից համարվում էր իբրեւ անհրաժեշտ ոչ միայն Թիւրքերի և Հայերի մէջ, այլ առհասարակ այն բոլոր ժողովրդների մէջ, թէ մահմեդական և թէ քրիստոնեայ, որ գտնվում են սուլթանական բռնապետութեան տակ և իրերի քայքայիչ ու մահացող դրութեան մէջ: Այդ կարծիքը ոչ միայն բազմաթիւ յօդուածներով արծարծված և պաշտպանված է «Հնչակում», այլ և Առաքելութեանս ընդհանուր Օրագրում ունի իր յատուկ յօդուածն ու տեղը: Ի վերջոյ, յայտնում ենք նաև այն, որ Առաքելութիւնս իր այդ գաղափարներն իրականացնելու համար՝ սկզբից ի վեր շատ ջանքեր է թափել յարաբերութեան մէջ մտնելու լուսաւորված թիւրքերի հետ, որպէս և ուղղակի կերպով մահմեդական ժողովրդների հետ: Բայց սակայն մեր բոլոր ճիգերն անկարող եղան, բացի սակաւ բացառութիւններից, յաղթելու այն թերահաւատութիւնն ու զգուշաւորութիւնը, այն ատելութիւնն, այն ֆանատիկոսութիւնը, որ ունեն միւսիւրմանները դէպի հայերը: Արդեօք չէ՞ք դրոշում, որ եթէ մեր այդ անաջողութեան պատճառը մինչև մի յայտնի աստիճան հայերի հակամիւսիւրմանական դժբաղդ քարոզչներն են, բայց աւելի ևս թիւրք կրօնաւորների ու պաշտօնեաների հակաքրիստոնեական կատաղի ընթացքիցն է և ապա գրանից ոչ պակաս՝ դարեւոր, կարծես այլ ևս առհասարակ մահմեդականների արեան ու մտի հետ խառնված, ցեղական ատելութիւնն ու կրօնական աններողութիւնն է: Աւ այդ ատելութիւնն ու աններողութիւնը շարունակ արուեստական կերպով հրահրվել ու վառ է պահվել կառավարութեան ջանքով, մի ջանք, որին մեծ նեցուկ ու օգնական է թիւրք ժողովրդի խաւար տգիտութիւնը:

Հնչակեան Առաքելութիւնն իր կենտրոնական օրդան «Հնչակում» քանիցս առաջ է բերել այն միաբեր, թէ, առանց կրօնի ու ցեղի խտրութեան, օսմանեան հպատակների շահերը գրեթէ միանման են. թէ այդ հպատակները պէտք ունեն առաջադիմութեան ու զարգացման իրանց քաղաքական ու հասարակական հիմնարկութիւնների, իրանց աւետարի, իրանց երկրագործութեան, իրանց ինդուստրիայի, իրանց կրթութեան. թէ այդ վերակազմութիւնը պէտք է կապարվէ Թիւրքիայում տիրող քաղաքական ու կառավարական ձեւերի արմատական փոփոխութեամբ. թէ այդ փոփոխութիւնն իր կողմից չէ կարող տեղի ունենալ այլապէս—քանի որ կայ բռնապետութեան յուսահատ դիմադրութիւնը—եթէ ոչ միայն ուժով ուժի դէմ, բռնի կերպով, ձգտելով հաստատել երկրում մէկ ընդարձակ ու դէմօկրատական սահմանադրութիւն: Այդ սահմանադրութեան հիմունքներնին հետեւեալ ներք—Մի երեսփոխանական մարմին, ընտրված

ընդհանուր քուէարկութեամբ և կազմված ներկայացուցիչներէից այն ազգերի, որոնք հպատակ են թիւրքիայում. այդ երեսփոխանական ընդհանուր ժողովը պէտք է ունենայ օրէնսդրական բոլոր իրաւունքները: Նահանգային ու համայնական ինքնավարութիւն. սրա ներկայացուցչական մարմին անդամները պէտք է նոյնպէս ընտրված լինեն ընդհանուր քուէարկութեամբ. նահանգային ու համայնական վարչութիւնն էլ ազատ և ընտրված. մարմին ընտրված դատաւորներէ: Նահանգային և համայնական ինքնավարութիւնն այն գաւառների, որ գլխաւորապէս բնակված են հայերով, պէտք է կրեն հայկական-ազգային կերպարանք և ունենան ազգային միջոցական մարմին. այդ հայկական ինքնավար նահանգները պէտք է դնուին միշտ, մէկ ընտրված՝ այդ բոլոր նահանգներին ընդհանուր վարչական մարմին միջնորդութեամբ, վարչական յարաբերութիւնների մէջ իրար հետ՝ ազգային գործերի ընդհանուր ու համատիպ կառավարման նպատակով: Աստարեալ հաւասարութիւն ամեն քաղաքացիների բոլոր օրէնքների առաջ, առանց խտրութեան ազգութեան ու կրօնի: Աստարեալ ազատ կիրարկութիւն լեզուի ու հաւատքի: Ազատութիւններ մամուլի, խօսքի, ընկերութեան, գումարման, ընտրական ազդեցիկայի: Նախնական կրթութիւնը ձրի և պարտաւորիչ մինչև մի յայտնի տարիք, որից յետոյ կառավարութիւնը պարտաւորութիւն ունի զիւրութիւններ տալու աւելի առաջ՝ գնալու մինչև միջնակարգ ու համալսարանական կրթութիւնները: Նահանգների բաժանումները պէտք է հիմնովին փոփոխվեն և կազմվեն իրանց բնական ազգադրական սահմաններում. և այլն:

Ահա իրանց ընդհանուր գծերում այն սկզբունքները, որոնք պէտք է կազմեն սահմանադրութեան հիմունքները: Ձեր ներկայացրած սահմանադրական ծրագիրն էլ իր ընդհանուր զծերով ու ըսկզբունքներով մօտաւորապէս նման է մեր այդ սահմանադրական ծրագրին: Մեր այդ ծրագիրը կարող է կազմել այն հողը, որ ընդհանուր է թէ՛ թիւրք և թէ՛ հայ հայրենասէրների դաշինքի ու համագործակցութեան համար և թէ՛ կազմում է նրանց նպատակը, անխտիր կրօնական ու ազգային տեսակէտից:

Զը նայած այն սարսափելի հարուածներին, որ հասցրեց հայ յեղափոխականներին ու ժողովրդին թիւրք կառավարութիւնը, պէտք է ասենք սակայն, որ յեղափոխական Առևտակցութիւնն, ընդհակառակն, աւելի զօրացաւ այդ բովում և հայ ժողովուրդն ինքն աւելի զայրացած է այսօր բռնութեան դէմ, քան երբ և է, աւելի պատրաստականութիւն է ներկայացնում շարունակելու սուրբ կռիւր, քան երբ և է: Աւ մենք միայն գոհ կարող ենք լինել, որ մեր այդ զօրութեանն այսօր

գալիս է միանալու մէկ ուրիշ ոյժ, թիւրքական առաջադիմական տարրը, որով աւելի հաստատ կը լինի սուրբ դատի աջող ու յաղթական ելքը: Աւ այդպիսով կարող կը լինենք ազատել մեզ քաղցր Հայաստանը և ձեզն սիրելի թիւրքիան այն սոսկալի անկումից, որը սպառնում է նրանց ու նրանց ազգերին, սուլթանի կործանիչ կառավարութիւնն առաջացրած լինելով ներքին կատարեալ անկազմակերպ, խառնակ ու մահացրնող վիճակ և արտաքին անապահովութիւն:

Ահա մեր պատասխանը, որ տալիս ենք ձեզ անկեղծօրէն:

ՆՊԱՍՏ ԶԵՅԹՈՒՆԻ.

ԿԵՅԵՐՈՐԴ ՑՈՒՑԱԿ.

ԲՕԼԳԱՐԻԱ. — ՇՈՒՄԼԱ քաղաքի Հնչ. Մասնաձիւղի նախաձեռնութեամբ հանգանակված 875 ֆրանկ արծաթ, որի 187 ֆրանկը ՇՈՒՄԼԱյի իգական վարժարանի հոգաբարձուհիների միջոցով հայ տիկիներից հանգանակված է:

ՌՈՒԼՇՈՒԿԻ Հնչական Մասնաձիւղի միջոցով հանգանակված 1041 լէվա: Մանրամասն ցուցակը յաջորդ համարում:

Թ. Բ. քաղաքի ազգայիններից հաւաքված Բ. քաղաքի Մասնաձիւղի ձեռքով հայրենասէր խմբից 45 ֆրանկ 50 սանտիմ, Վար. Սար 20 ֆր. Ժամագործ, Յ. Գեո., Կիր. Յ. Թըղըլ., Խ. Մ. և Ազգասէր Ոմն 10-ական ֆր. Կար. Ղազ., Դիոն. Գեո., Յակ. Թէքի., Թ. Ն., Թ. Մ. Նիկ., Սար. Մ. Նիկ., Ոմն և Գեո. Յ. Էկին. 5-ական ֆր. Կոկո և Յարութիւն Կ. Թէքի. 4-ական ֆր. և 50 սանտ. Թըրպոմանօֆ 4 ֆր. Թագ. Մեր., Յակ. Պետ., Պետ. Մ. Յար., Թագ. Հայր., Անդ. Յ. Էկին. Յով. Ստ., Ման. Գաղա., Ման. Մ. Նիկո. և Ման. Հայր 3-ական ֆր. Աբ. Պետ., Պաղ. Սար. և Պաղ. Յ. Էկին 2-ական ֆր. Կար. Մ. Յար. և Սար. Ղուկ. 5-ական ֆրանկ:

Ֆիլիպ է քաղաքի Հնչ. Մասնաձիւղից 88 ֆրանկ 80 սանտիմ: Նոյն քաղաքի ազգայիններից ստացված 1570 ֆրանկի նուիրատուների ցուցակը*): Մասնաձին 136 ֆր. 20 սանտիմ, Աւետիսեան և Կուստիկ 113-ական ֆր. 50 սանտիմ, Փայլակ 120 ֆր. 20 սանտ., Ար 2000, Հ. Յ. Ա. Դերձակ և Շաւարշի միջոցով Մասիսից 100-ական ֆր. Արաքս-Արցախ 94 ֆր. 19-րդ դար 70 ֆր. 10 սանտ., Գաֆէն 68 ֆր. 10 սանտ., Երվանդ Յ. Ադ. 50 ֆր. Դեղին 60 ֆր. Ոմն 40 ֆր. Մաթ. և Ղուկ 30-ական ֆր. Բարեպաշտուհի 23 ֆր. Տիկին Տիմայիս 22 ֆր. 70 սանտ., Չէմպերձի, Տատասի, Մեկենայ Հայաստանի, Թերզեան Եղ., Պայուստ, Ա. Գ. Պոյաձեան և Յորեն 20-ական ֆր. Թէկիրտաղ 18 ֆր. 80 սանտ. Հիդիկ, Ալիւր, Ծաղիկ, Յ. Թոբակ, Շիշման Գ. և Հ., Երկաթ և Ոմն 10-ական ֆր. Ա., Թ. Արսէն, Շաւարշ, Քահանայ, Հայր և Որդի և Փուշ 9-ական ֆր. 40-ական սանտ. Գուշակ, Ոմն, Ա. Իւղաբեր, Արհեստ, Ինքնանուէր և Երկանեան 4-ական ֆր. 70-ական սանտ. Սուր 1 ֆր., Գաշոյն 50 սանտիմ:

ԱՄԵՐԻԿԱ. — Պրովիդէնս քաղաքի Հնչական Մասնաձիւղի միջոցով. Գ. Տ. Չ. 20 դոլար, Մ. Տ. Պ.

*) Ընդհանուր գումարը գետնովված էր արդէն «Հնչակ» № 3-ում:

Լ. Կ. Բ. 15-ական դ. Պ. Գ., Յ. Տ. Պ., Կ. Պոլսի Վա-
ռօթ խմբին պատկանող երեք ընկեր և Գ. Մ. Մ. 10
-ական դ. Մ. Ա. և Տ. Մ. 8-ական դ. Ա. Տ. Յ. 7 դ.
Գ. Գ., Մ. Գ., Զ. Պ., Յ. Վ., Մ. Խ. և Հայրենասեր
մէկ անձ 6-ական դ. Ա. Պ., Կ. Ս., Մ. Ն., Յ. Կ.,
Մ. Ճ., Ա. Ա., Ս. Թ., Մ. Գ., Պ. Յ., Յ. Տ. Պ., Գ.
Մ., Թ. Ե., Ս. Կ., Տ. Հ., Պ. Ս., Զ. Ս., Ն. Ս. և Ա.
Պ. 5-ական դ. Ն. Թ. 4 դ. Պ-եան Եղբարք և Ե. Օ.
3-ական դ. Կ. Ա. 2 դ. 80 սէնտ, Պ. Ա. 2 դ. 50 սէնտ,
Մ. Ն., Կ. Է., Գ. Ն., Յ. Է., Ա. Ա., Կ. Մ., Հայկազ,
Ս. Ա., Յ. Ա., Գ. Գ., Կ. Բ., և Ե. Փ. 2-ական դ. Յ.
Տ. 1 դ. 50 սէնտ, Հայրենասեր ոմն, Մ. Պ., Ս. Տ., Գ.
Բ., Ազգասէր ոմն, Կ. Տ., Մ. Ա., Յ. Տ., Ա. Պ., Պօն-
տօ, Ս. Մ. Ա., Կ. Տ., Յ. 2., Դ. Խ., Յ. Բ., Մ. Ս.
և Խ. Վ. մի-մի դ. Յ. Պ., Ս. Կ., Հայրենասեր ոմն, Ա.
Խ., Ա. Զ., Դ. Մ., Հաճի Ս., Ա. Մ. և Պ. Կ. 50-ա-
կան սէնտ: — Ս. Ա.-ից 5 դոլար: — Դի. քսօն քաղա-
քից Գր. Առ.-ի միջոցով Յ. Բ.-ից 5 դոլար: — Նիւ-
Պօրտ քաղաքից Արամից 50 դոլար:

ՅԻՆՍՏԻԱ. — Պարիզի Գեղ. Վարժարանի նկար-
չութեան մէկ ուսանողի կողմից մի իւղանկար պատկեր
500 ֆրանկ արժողութեամբ:

ԹԻԻՐԲԻԱ. — Եէշիլ-Վրմագ քաղաքի Հնչակեան
Մանածիւղից 100 օսմ. լիրա:

ՏԵՌՈՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԽՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

Վանից մեզ տեղեկագրում են հետևեալը. —
«Վանայ Հնչակեան Մանածիւղի վարչութեան
որոշումով մահւան դատապարտուեցաւ և ըս-
պանն ու եցաւ յայտնի ազգամիւս Պօղոս Ե-
պիսկոպոսը:»

ԿԱՐՄԻՐ ԵԱՐԲ.

ԱՂԱԹԻ ԿՈՏՈՐԱԹԻ. ՄԱՆՐԱՄԱՆ ՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.

ՄԵԹ ՏԱԳՆԱՊ ՄՈՒՇԻ, ՍԱՍՈՒՆԻ, ՍՂԵՐԴԻ
ԵՒ ՇՐԱՎԱՆԵՐՈՒ ՄԵԶ.

Մուշ, 1 Նոյեմբեր 1895.

Ահաւոր զէպքեր ունիմ արձանագրելիք. գրիչս
հայու արեան հեղեղին մէջ թաթխելով է որ կը գը-
րեմ սոյն տխրագոյժ նամակս: Անէ՛ծք բռնակալութեան,
այլ և անէ՛ծք 19-րդ դարու քաղաքակրթութեան. անէ՛ծք
խրամական արիւնարբու մորեռանդութեան, այլ և անէ՛ծք
անտարբեր «կառավարութեան»¹. անէ՛ծք շահամոլ դի-
ւանագիտութեան, այլ և անէ՛ծք անգգայ և ցառնափրտ
հայերուն...

ԲԱՂԷՇ.

Հոկտեմբեր 12-ը Բաղէշի սուգի օրն է. Շահ-Աբ-
բասէն ի վեր չտեսնուած զէպքեր տեղի ունեցան հոս:

Ատենէ մը ի վեր խուլ շշուկ մը մերթ ընդ
մերթ կը դողացնէր ժողովուրդը. — Թուրքերը Հայերու
վրայ պիտի յարձակին — խօսքը Բուստանի ուրուականին պէս
հայ ժողովուրդի երեւակայութիւնը կը խռովէր յաճախ:
Ամենէն աւելի պաղարիւնները կը կարծէին թէ վեր-
ջին պատերազմէն ի վեր յաճախ յեղյեղուած անխմատ
խօսք մըն էր այս: Վերջին օրերու մէջ սակայն այս
խօսքը սկսաւ ժողովրդի լուրջ ուշադրութիւնը գրաւել.
դիտեցին որ ատենէ մը ի վեր անծանօթ զէմքեր
կաւելնան քաղաքին մէջ ասոնք տէրվիշներ, մօլլաներ,
Փախիներ, շէյխեր ու զանազան ցեղի քրիւտեր էին:

Թուրք ժողովուրդը յայտնի կամ ծածուկ կը զինուի.
պզտիկ պզտիկ ցոյցեր կը լսան հայերու դէմ: Ժողովուրդը
ըմբռնեց թէ ահա ինքի փոթորիկ մը կը պատրաստուի. ըս-
կաւ կասկածիլ, զգուշանալ: Կառավարութիւնը կռա-
հեց խորամանկ Էօմէր պէյը, կուսակալի փոխանորդը,
պէտք զգաց ժողովուրդը միամտեցնելու. զօրքեր ու
ոստիկաններ սկսաւ քաղաքին մէջ պտըտցնել, թնդանօթ
զետեղեց մէկ բանի տեղ թուրք թաղերու դիմաց:
Հայերը ապահովուեցան: Քանի մը օր յետոյ թուրքերու
համարձակ զինակրութիւնը, խրոխտ սպանալիքները
նորէն սկսան ժողովրդի վրայ սարսափ ազդել և Հա-
յերը սկսան գունդագունդ Առաջնորդարան հաւաք-
ուիլ: Նորեկ Առաջնորդը, Շահպաղեան Յակոբ վարդա-
պետ քանի մը երեւելիներու հետ յոյն օր, հիւպատոսի,
(12 հոկտեմբեր) կուսակալի փոխանորդին կերթայ՝ ժողո-
վուրդի սարսափը, թուրքերու շարժումը կը բացատրէ:
Էօմէր պէյ ապահովիչ խօսքերով ամէն երկիւղ կը
փարատէ. կըսէ թէ ինքը ամէն խիստ միջոցներ ձեռք
առած է ու կը ցուցնէ Սուլթանի մէջ հեռագիրը, ուր
բարեկարգութեան համար քանի մը կէտեր շեշտուած
էին. յետոյ կաւելցնէ, «հակառակ պարագային մէջ,
բան մը որ անսպասելի ու անկարելի է արդէն, ձեր
մէջ հաւի փետուրին անգամ պատասխանատու եմ»: Կու-
սակալի փոխանորդի այս որոշ, վճռական խօսքերը կա-
պահովեն Առաջնորդն ու հետեորդները որոնք իրենց
կարգին կապահովեն ժողովուրդը: Հետեալ օր, ուր-
բաթ, (13 հոկտ.), կէսօրուան աղօթքին թուրքերը սո-
վորականէն տասնապտիկ աւելի թուով մզկիթները կը լե-
ցուին. շուկայի մարդիկ (թուրքեր) սովորութեան հակա-
ռակ իրենց խանութները կը գոցեն: Հայերու վրայ պա-
կուցիչ սարսափ մը տիրէ. իրենք ալ կը շտապեն փախ-
չիլ, ոմանք իրենց խանութները կը գոցեն, ուրիշները
ժամանակ չեն ունենար, կը թողուն, կը հեռանան:
Այս շարժումը դեռ նոր սկսած, ժանտարմա մը Ամե-
տեան Յովսէփին (եռանդուն երիտասարդ վաճառական մը
որ թաղական և հոգաբարձու էր) կը մօտենայ ու կը
պահանջէ որ խանութը չը գոցէ. ասիկա մօտիկ չընէր.
խօսակցութեան միջոցին ժանտարման սուրը կը քաշէ կը
զարնէ, անդիէն փոխա մը ու վիզէրի հարուածով մը
անոր կեանքը կը վերջացնէ: Նշանը տրուած էր. մզկիթնե-
րէն դուրս կը խուժեն թուրք, քրիւտ, մօլլա, շէյխ,
սօֆիստ ու ֆախի, որոնք երկար ատենէ ի վեր հա-
ւաքուած կը հրահանգուէին շէյխերու կողմէ ուղղակի
և կառավարութեան կողմէն անուղղակի: Շուկայի բոլոր
անցուղարձը կը խափանեն. անխնայ կըսիսին կոտորել
հանդիպած հայերը. շատեր բարձր տանիքներէ ինքզինք-
նին վար կը նետեն ոմանք գետին մէջ, ոմանք կամուրջ-
ներէն վար. մէկը չաղատուիր սակայն. խանութներու
մէջ կըսպաննեն, շուկայի մէջտեղը կը ջարդեն, գոնորը
կը կոտորեն, ներս կը մտնեն ու կը մորթեն: Սակայն
շատեր երկու խաներու մէջ ապաստանած գոնորը
գոցած էին. ասոնք ջարդէ կապտին: Կոտորածը
կը տարածուի երկրորդական փողոցներու ու թաղերու
մէջ: Նոյն միջոցին Ս. Սարգիս եկեղեցւոյ ուսուցիչը
գերագոյն յիմարութիւնով, վախնալով որ վարժարանը
կոխեն, աշակերտները կուղէ իրենց տունները փախցնել.
Թուրքերը սուրով ու դաշոյնով 5-12 տարեկան 120
աշակերտներու վրայ կը յարձակին. ալ երեւակայեցէք.
անգթութեան ու կատաղի վայրագութեան ահալ տե-
սարան մը ուր սուր, աղիոգորմ ճիւղեր, սրտաձիւղի ա-
ղաղկներ, աղբսող մանկական ձայներ կը խեղդուին,

կը լռեցուին սուրերու, գաշոյներու սոսկալի հարուածնեւ տակ. ու փողոցը այդ անմեղ հոգիներու գիւններովը ծածկուած, արիւնովը ողողուած, ա՛հ, Բեթլէմ-հէմի կոտորածի մը, Լէնքթըմուրի վայրագ ջարդի մը սոսկալի կենդանի պատկեր մը կը ներկայանայ: Ախ այդ մատուաշ սերունդը... Պահ մը կըստիպուիմ գրիչս դադրեցնել. արցունքներն ու յուսահատ կատաղութիւնը կը խեղդեն զիս: Ամենէն անտարբեր, նիւթացած եպիկուրիսդ հայու յիշողութեան մէջ թող դաւաւած՝ քանդակուած մնայ դպրոցական մատաղերամ, աշակերտներու այս ջարդը, թո՛ղ իր ցեղի արիւնը գրգռէ զինքը, թո՛ղ մոռնայ իր Եսը, իր գծուած Եսը ու վսեմ զգացմունքներով յուզուած նիւթական ու բարոյական ջանք մը չը խնայէ իր նահատակ ու անկեալ ազգին վերակենդանացման համար:

Շուկայի այս ջարդն ու կողոպուտը կէսօրուան ժամ վեցուկէսէն մինչև երեկոյեան տասներկուքը կը տևէ: Շուկային մէջ բոլորովին աւարի կառնուին հայոց խանութները. Բաղէշի հարուստ հայ վաճառականներու բոլոր ապրանքները, դրամարկները կը պարպուին: Զետոյ թաղերու վրայ կը յարձակին. դռները կը կոտորեն, ներս կը մտնեն, շատ կիներ կը սպաննեն, շատ յղի կիներ ալ կը վիժեն ու կը մեռնին: Դիակները անթաղ փողոցներու մէջ կը մնան մերկացած՝ կողոպտուած մինչև կիրակէ, վերջապէս կառավարութիւնը հրաման կընէ թաղելու: 300 քաղաքացի գիտակ կը ճանչցուին, կը թաղուին. հարիւրաւորներ ալ կառավարութիւնը այրել տուաւ անձանաչելի ընել տալու համար. շատեր ալ իբր թուրք՝ թուրքական գերեզմանատներու մէջ թաղել տուաւ: Հիմա Բաղէշի կացութիւնը ահաւելի է. ամեն տուն պաշարման վիճակի մէջ է: Խաներու մեջ ապաստանողներ երկու օր վերջը դուրս հանեցին ու բանտը լեցուցին. հոն մահու սպանալիքով կը ջանան ստորագրել տալ թուրք մը թէ Հայերը նախադրած կեղան մղկիթին վրայ: Ա՛հ, թրքական լրբութիւն: Խաչմանուկեանները իրենց տան մէջ ամրացած չնն ընդունիր կառավարութեան հրաւերը որ զիրենք բանտ կը կանչէ. ասոնք համոզուած որ թէ թուրքերը և թէ կառավարութիւնը իրենց արիւնին ծարաւի են, Աւետիս Էֆէնդի և եղբայրները որոշած են ղէն ի ձեռին դիւցաղէտբար մեռնիլ իրենց տան սեմին վրայ:

Ջարդէն ի վեր օրեր ու շաբաթներ անցան, մեր վիճակը նոյն մնաց. ամէն օր 4-5 հոգի, կին, երեխայ, վիրաւոր, սարսափած մարդիկ կը մեռնին իրարու ետեւէ: Չմեռը սկսած է. 10 տուն չկայ որ ուտելիք ունենայ. 1500 բարեկեցիկ ընտանիք պիտի ոչնչանան առաջիկայ ձմրան. անթուրթիւնն ու սարսափը զասոնք բնաջինջ պիտի ընէ:

Բնիկ քաղաքացիներէն զատ հարիւրաւոր օտարականներ ու պանդուխտներ սպանուած են. ի մէջ այլոց Խոյթէն երկու քահանայ. մեր զոհերուն թիւը 500-էն 850-ի մէջ կը տարբերի. հետզհետէ մեռնողներն աւելնալով 1000ը կանցնի. այսչափը լոկ Բաղէշի մէջ: Ամբողջ քաղաք մը նիւթապէս, բարոյապէս իր բնակիչներովը մէկտեղ փճացած: Արդեօք մարդասիրութիւնն ու գթութիւնը ցնորական բառեր են թէ հնարուած են մարդակեր և արիւնարբու գազաններ դիմակաւորելու համար...

Բաղէշի շրջակայ գիւղերէն Ղուլթիկը բոլորովին կողոպտուած, կիսովին այրուած և բնակիչներէն 25-30

հոգի սպանուած են: Ալոյցիք և Նահիէի քիւրտերը Տատիկի և Կիւզէլտէրէի բոլոր գիւղերը կողոպտած են, Խիզանի վիճակը աննկարագրելի է: Խոյթի մէջ քիւրտերը տեղւոյն դայադամին թելադրութեամբ անխնայ յարձակած են հայ գիւղերու վրայ և շատ աւարառութիւնը և սպանութիւնը գործած են. վերին Կորվու բոլորովին ջնջուած է բնակիչներովը մէկտեղ. միւս գիւղերէն լուր անգամ չկայ. միւսոյն երկիւղալի լուրթիւնը կը տիրէ Մոտիանի 14 գիւղերու նկատմամբ:

ՄՈՒՇ ԵՒ ՄՇՈՅ ԴԱՇՏ.

Հոկտեմբերի 15-էն ի վեր Մուշի և շրջակայ բոլոր գաւառներու վիճակը քստմեղի ճգնաժամ մ'է: Կարինէն վերադարձող մշեցիները Փալանթօքէնի միւս երեսը, Արապ-չայըրը ըստած տեղը զինուած թուրքերու կը հանդիպին. այս թուրքերը Կարինէն անոնց ետեւ ինկեր էին: Թէև կարաւանը մեծ էր և բազմաթիւ թուրք ծամբողներ ալ ունէր, սակայն աւաղակները միայն հայերը կը մեկուսացնեն, հեռու կը տանին և ահաւելի տանջանքներով կը սպաննեն: Այս զոհուողները 24 հոգի են. բոլորն ալ կտրիճ երիտասարդներ:

Հոկտ. 26-ին քսանի չափ քիւրտ և չէրքէզ աւաղակներ Մշոյ դաշտի Ալիճան գիւղի Մուխսու տան վրայ կը յարձակին, զինքը, իր տղան կըսպաննեն և ոչ խարները կը տանին:

Միւսոյն օր ճիպրանցի Շիւպհէրի տղաքները և Հաճիանցիք Զիարէթ գիւղի վրայ կը յարձակին, 1,035 ոչխար, 231 տաւար կը յափշտակեն:

Հոկտ. 27-ին 100 ճիպրանցիներ երկրորդ անգամ Խէյպեան գիւղի վրայ կը յարձակին, ամբողջ գիւղը կը կողոպտեն, չորս մանկամարդ կիներ գեղէն դուրս հանելով կը բռնաբարեն. այս կիները հիմա մեռնելու վտանգին մէջն են. քանի մը հոգի ալ կը վիրաւորեն կանցնին:

Հոկտ. 29-ին Պատրքի քիւրտեր Շէխլան հայ գիւղի վրայ կը յարձակին, սակայն քիւրտմէյտան առնուն հայաբնակ գիւղի բնակիչները օգնութեան հասնելով յարձակողները կը վանեն. այն տունն ասոնք կը դառնան քիւրտմէյտանի վրայ, անոր պահապանը կը զարնեն:

Ի՞նչ երկարեմ. Մշոյ դաշտի բոլոր գիւղեր առանց բացառութեան կողոպտուած են և մարդասպանութեանց թատր են դարձած. Վարդենիսի, Մուշեղ-շէնի բոլոր բնակիչները փախած են Էրոսն շէյխի մը պաշտպանութեան տակ. ժողովրդին ո՛չ ուտելիք մնաց, ո՛չ տուն ու տեղ. հազիւ անցեալ տարուան աղէտներէն աչքը բացած էր, աւասիկ յուսահատեցուցիչ տագնապներ իրարու ետեւ կը հասնին, սպանալով ոչնչացնել այս հայաշատ պատմական գիւղերը:

Պուլանդի, Մանազկերտի, Ախլաթի գիւղերու վիճակը սարսափելի է. արդէն հազարդակցութիւնները ընդհատուած են. մէկը տունէն դուրս չելնել և տունը մնալով ալ կըսպասէ ստոյգ մահուան մը: Կառավարութիւնը սրած է քիւրտերու և թուրքերու դանակները, մինչդեռ, ընդհակառակը, եթէ տեղ մը հայերը դիմադրելու պատրաստութիւն ցուցնեն, ինքը անմիջապէս կը խեղդէ բողբոջած ոյժը: Ախլաթի փերիսուս գիւղը կը կողոպտեն քիւրտերը և ահագին աւարով ետ կը դառնան. շրջակայ գիւղերէն 25 հայ երիտասարդք օգնութեան կը վազեն, քիւրտերու առջև կը կտրեն, անոնց աղան և իր տղան կսպաննեն ու կստիպեն զանոնք անձնատուր լինելու. քիւրտերու

զենքերը կը գրաւեն և գիւղացւոց թալանը ետ կը գարձեն: Գայմագամ Խպրահիմ պէյը այս բանը ըսելուն պէս, ձիաւոր զօրքերով գիւղը կը կոխէ. կսպառնայ զայն այրել, ջնջել, եթէ քիւրտերէն առնուած զենքերը չը տրուին. գիւղացիները ճարահատ ամէն բան ետ կուտան: Աւասիկ ինչ կերպով թիւրք կառավարութիւնը հայ ժողովուրդը կը պաշտպանէ ու այդ մտքով ամէն օր յայտարարութիւններ կ'ընէ. Խըրսէ րտար ըսուած ձիաւորներ հանած է գիւղերը, որոնք աւազակներու գողակիցներն ու գողօնաթաքոյցներն են. ասոնք ոչ միայն ծանր բեռ մ'են խեղճ գիւղացիներու վրայ, մանաւանդ այս տնտեսական ամենավատթար վիճակին մէջ, այլ միւսնոյն ատեն ասոնց գաղտնի պատուհասը իրենց մեքենայութիւններով և անտեղի խտրութիւններով:

Մշոյ քաղաքի վիճակը նոյնպէս սոսկալի է. շուկաները գողված են. կառավարիչը կըստիպէ որ բացուին, սակայն ժողովուրդը իրաւամբ կը կասկածի. թուրքերը համարձակօրէն կը յայտարարեն թէ սուլթանի հրամանն է հայերը ջարդել: Զորս հարկեր չէքքէ՞ք ձիաւորներ Մուշի մօտերն կը սպասեն: Բաղէշէն վերագարձող հարստացած քիւրտեր ասոնց նախանձը կը շարժեն և ասոնք ալ կուղեն իրենց ծարաւը յագեցնել. Մուշէն օրէ օր սոսկալի կոտորածի մը կսպասուի:

Հացը երթալով կը սղէ, ձմեռն մեր դրան առջեն է. Մուշը քանի տարիէ ի վեր տնտեսապէս բոլորովին քայքայուած՝ հիմա հոգեվարք վիճակի մէջ է. արդեօք այս զուտ հայկական գաւառի դամբանականն ալ պիտի կարգանք:

(Կը շարունակվի)

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԴԵՊՔԸ.

Սեպտ. 21 հինգշաբթի օր տեղական կառավարութեան շնորհակալութեան տեղեկագիր մը խմբագրուելով՝ ներկայացուեցաւ բոլոր հասարակութեանց առաջնորդներուն և ակաւաւոր անձանց ստորագրելու համար: Սոյն հանրագրով կառավարութիւնը ուղեց հաստատել թէ ինչիս փաշայի բարեգը պաշտօնավարութեանէն, սկզբէն ցայսօր, գոհ են, թէ տեղոյս մէջ կատարեալ անգործութիւն կը տիրէ, թէ արդարութիւնն ի գործ կը դրուի, ելն, ելն: Նախապէս սոյն տեղեկագիրը ներկայացուեցաւ միւս աղգապետներուն, որոնք պատասխանեցին թէ «Երբեք աւելի մեծ աղգ մը կայ Հայ ազգը տարէք նախ թող անոնք ստորագրեն, ապա մենք»: Ասոր վրայ՝ զայն կը բերեն Հայոց ջոջերուն Մինասեան Յովհաննէս, Գաղաղեան Յովսէփ (հայ-կաթողիկէ), Գուլումճեան Յակոբ, Խանտաւեան Կարապետ, Մուրադեան Սարգիս, որոնք զանազան գձուձ նկատուներով՝ հանրային շահը կը զոհեն անձնականին, անխղճաբար կը ստորագրեն, ապա՝ Դերձակեան Տ. Կարապետ քահանային կը տանին: Այս զառամեալ խեղճ ու կրակ քահանայն նոյն գրութիւնը կարգացնել կուտայ եկեղեցւոյ կալուածական տրոց հաւաքիչ Ղուկաս անուն վատին, որ չը գիտցուիր որո՞ւ թեւագրութեամբ կը ստիպէ քահանային, որ ստորագրէ ըսելով թէ «ջոջեր հակալութեան պարզ գիր մ'է»: Միւս ազգերը տեսնելով սոյն ջոջերու ստորագրութիւնը Տ. Կարապետի (իբր հայոց առաջնորդի) ստորագրութեան հետ, իրենք ալ կը հետեւին անոնց: Բողոքականաց պետերը միայն չեն ստորագրեր. «Ժողով ընենք, կը պատասխանաւորեն, անոնց կամքը շոշափենք, ապա կը ստորագրենք»:

Այս ամենէն բանաւոր պատասխանը կուտան ու չեն ստորագրեր: Ուրբաթ ժամը 9-ին շուկային մէջ ժողովուրդը իմանալով որ այսօրինակ գիր մը ստորագրուած է, գրգռուած կը դիմէ հայոց եկեղեցին (ս. Կիրակոս) զայս ստուգելու համար: Տ. Կարապետ կամայ ակամայ կը խոստովանի դառն ու տխուր իրականութիւնը, որու վրայ բոլոր ազգերը չափազանց յուզուած կը դիմեն իրենց եկեղեցիները: Մեր եկեղեցւոյ գաւութին մէջ յետ զանգակահարութեան ժամը 1-ին, կը ծեծեն թշուառական մեղսակից Ղուկասը և խուցը կը խոթեն Տ. Կարապետը որ հազիւ կաղատի մոլեգնող խուժանին յարձակումէն, խոստանալով որ պատրաստ է իրենց պահանջներուն դոհացում տալ իւր կնիքը ժողովուրդեան տրամադրութեան ներքեւ դնելով: Ժողովուրդը անմիջապէս պատրաստել կուտայ երկու գրութիւն, որոնցմէ մին աղգ. Պատրիարքարանի ուղղուած, իսկ միւսը տեղոյս Ֆրանսական Գեր-Հիւպատոսութեան. յորում ստորագրողն (Տ. Կարապետ) կը յայտնէր խաբէութեան ներքեւ ստորագրած է և կընքած տեղեկագիրն որ իրողութեանց և արդի վիճակին հակառակ միայն կը հաստատէ: Խեղճը անձրկած պահ մը վերջ հազիւ հազ ումանց պաշտպանութեամբ շունչ կանուս ուրիշի մը տան մէջ:

Սեպ. 23, Շաբաթ. — Ժողովուրդը նոյն յուզման մէջ՝ եկեղեցիները խռնուած կը պահանջէ արդարութիւնը երեւան հանել. զանգակահարութիւններ կը շարունակուին, խաթամուժը կը ստուարանայ: Հայոց սուրբ Կիրակոս եկեղեցւոյ կից Բաղդէացւոց եկեղեցւոյն մէջ ժողովուրդը բարկացած իրենց քահանայից դէմ՝ նախատանաց ու հայհոյութեանց տարափներ կը թափէ անոնց վրայ. կը պողայ բարձրաձայն՝ «Ինչու կը ստէք ճշմարտութիւնը, ինչո՞ւ կուրանաք իրողութիւնը. մինչև երբ արդարութիւնը ոտնակոխ պիտի ընէք անձնական շահերու համար, մինչև երբ պիտի քծնիք կառավարութեան սիրելի ըլլալու համար. ալ բաւական է, դիմակնիդ վար առէք, զձեզ չենք ուղեր, չենք... դուրս ելէք ասկէց, եկեղեցին պիտի փակելը, դուք հոս գործ չունիք, անօրէններ»: Սոյն օրէն ի վեր երեկուրէն ըսկեալ Բաղդէացոց ու Հայոց եկեղեցիները փակ կը մնան: Առաւօտուն ժողովուրդեան դպրոցը խուժեղէն՝ ս. Կիրակոսի վարժարանին ուսուցիչք պարտաւորեցան փակել վարժարանը. քիչ վերջ ժողովուրդեան պահանջման վրայ կառավարութեան պատրաստած շնորհակալութեան տեղեկագրոյն հակառակը հաստատող հանրագիր մը խմբագրուեցաւ, երեք օրինակաւ, երկուքը՝ զատ-զատ ճամբաներով Կ. Պոլսոյ աղգ. Պատրիարքարանին և միւսը տեղոյս Ֆրանս. Գեր-Հիւպատոսութեան մատուցանելու նպատակաւ. ստորագրողներու և կնքողներու թիւը հետզհետէ մինչև 2500-ի հասաւ: Բողոքականաց, Հայ-կաթողիկէներու, Բաղթէացւոց և այլոց խնդրանաց վրայ թոյլատրուեցաւ որ իրենք ալ ըստ ստորագրեն:

Սեպտ. 24, կիրակի — Զանգակահարութիւնը առտուրէն սկսեալ անդադար շարունակուեցան. հետզհետէ փակուեցան Հայ-կաթողիկէաց, Հայոց ս. Սարգիս թաղի, Ասորի-կաթողիկէաց, Յունաց և բուն Ասորոց եկեղեցիներն ու բողոքականաց ժողովարանը. մի քանի եկեղեցեաց ժամերգութիւնք ընդմիջուեցան և ապա կիսկատար ձգուեցան. ժողովուրդը յուզուած ալ աւելի մէկ եկեղեցիէն միւսը կը դիմէ, արտակարգ աղաղակներով զանգակներ կը զարնուին չէ թէ արթութեւ,

այլ յուզելու, հրահրելու, աղմկելու համար, երկուստեք սարգներ խմբակներ կազմած՝ եկեղեցեաց գաւիթները տանիքները, զանգակատանց մէջ կերպեն, կը ծափահարեն, կը գողան, կը գողեն, կաղաղակեն և իրենց արձագանքային ձայներով օդը կը թնդացնեն. ծեր ու մանուկներ, կիներ ու աղջիկներ, երկուստեք սարգներ ու պատանիներ ձեռք-ձեռքի տուած կարծես կառավարութեան քիթին կը խնդան, որ դեռ նոր արթնցած, սրտադող կուզէ դարման մը տանիլ, միջոց մը գտնել այս ընդհանուր յուզման առաջին առնելու համար: Հայ կաթողիկոսը ջոջերէն գաղաղեան թրքամուլ Զովսեփի, կառավարութենէն ընդունած հրահանգին համաձայն, բոլոր քրիստոնէից ամենէն ժողովուրդային պետերուն ու անձանց հետ Ասորոց ա' Աստուածածին եկեղեցին ժողով կը գումարէ. խիստ երկար վիճաբանութիւններ կըլլան անոնց արդիւնքի: Ամբոխը զայս իմանալով կը յարձակի իրենց Ասորոց Առաջնորդարանի վրայ, որ միւս ժողովականներուն պէս, հազիւ կը յաջողի փախչիլ: Նոյն օր Հայոց Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ նիստ կը գումարեն Հայոց կրօնական և քաղ. Պատ. Ժողովներն, որոցմէ վերջնոյն անդամները և երկուքին ղեկանները ժողովուրդեան առաջարկութեան վրայ՝ կը ստորագրեն այն հանրագրին, որով կը բողոքուէր 2500-էն աւելի ստորագրութեամբ կառավարութեան անարդարութեանց դէմ: Երեկոյեան ժողովուրդը միաձայնութեամբ կորոշեն երկուշաբթի խանութ չը բանալ:

Սեպտ. 25, երկուշաբթի. — Բոլոր քրիստոնէից եկեղեցիները, գաղոցները, խանութները փակուեցան. ըսելով թէ ոչ կեանքի և ոչ պատուոյ ապահովութիւն կայ. ժողովուրդը եկեղեցեաց գաւիթներու մէջ խռնուած՝ կը շարունակեն ստորագրել հանրագրին, կերպեն, կը ծափահարեն, կը զանգակահարեն, ընդհանուր ժխտք մը առաջ բերելով: Հայոց առաջնորդական տեղապահ գեր. տ. Էզեկիէլ վարդապետ մասնաւոր սուրհանդակներու միջոցաւ ստացած նամակներն տեղեկանալով այս ամենը՝ կիրակի օր ճամբայ ելած է Ֆարդինէն (Գիրիկերտ). ժողովուրդը անհամբեր իրեն գալստեան կըսպասեն, յոյսերնին միայն անոր վրայ դրած են: Հայերը կիւրակէ օր՝ մէկ, կսկայսօր երկու հեռագիր զարկին ազգային պատրիարքարան և իրողութիւնը հաղորդեցին համառօտակի, պատասխանի յուզումն ալ աւելի կը գրգռէ զմեզ: Չայներին լսող չի կայ, մեր դրամներն՝ կը գրպանեն՝ ու հեռագրերը տեղը չեն հասցներ. ալ ինչ կը յուսացուի այսպիսի ապօրինի կառավարութենէ մը:

Ինչպէս կիւրակէ թրքամուլ ջոջերը ժողով կազմեցին խաղաղութիւնը վերահաստատելու համար, նոյնպէս և կիւրակէ իրիկուն և այսօր, ոստիկանաց հսկողութեան ներքեւ ժողովներ կազմեցին, այլ ի դուր. իրենց այս ազգամիտ գումարումներուն վրայ ժողովուրդը մոլեգնած կը ծեծէ տ. Անդրեասը հայ-կաթողիկէներու փոխառաջնորդը, միւսները կը փախչին, Խանէտանեան կարապետն ալ տ. Անդրեասին բաղդին կարժանանայ: Ժողովուրդը կը պատրաստէ կառավարական անարդարութիւնները ապացուցանող դէպքերու ցուցակը. կառավարութիւնը զօրքը դուրսէն քաղաք փոխադրեց, և զանոնք զէնքի տակ առաւ: Թուրքերը ահաբեկած կըլնեն:

(Կը շարունակվի)

ԴԵՊԶ ԵՂԵՍՒՈՅ.

Եղեւսիա, 15 Հոկ. 1895

Սիւրակէ ժամը 5-ին իմացանք առաջին աղէտաւ լի լուրը. փողոցէն եկողները շուարած կը պատմէին Սարաֆ Պօղոսին դաշոյնով հինգ տեղէ վերաւորուելը Պէրէճիկի և երեք ընկերներու ձեռքէն, մայր եկեղեցւոյ առջևի փողոցը: Օրը կիրակէ ըլլալուն բաւական հայ երկուստեք սարգներու աշխատութեամբ ոճրագործ մահմետական Պէրէճիկին ձերբակալուելով եկեղեցւոյ առջևի պահանջող կը յանձնեն, իսկ երեք մահմետական ընկերները կը փախչին: Սարաֆ Պօղոսը 15 վայրկեան վերջ կը մեռնի: Յիշեալ Պէրէճիկիին այս ոճրագործութիւնը ըրէ ըսողը հարկւրապետ մը ըլլալը պարզուեցաւ, բայց պահակին մէջ զօրքերը երեք սիւն կիւր զարնելով կը սպաննեն ոճրագործ մահմետականը, և Սէրայը բերելով միւլութեամբ փիւն կըսեն թէ մեռնի մեռեալը քրիստոնէից ձեռքէն առինք. մինչդեռ եղածի Մեղքոն և Սարգիս Էֆէնտիները քննելով սիւն կիւր վերջով մեռնիլը հաստատապէս ստուգեցին: Արջապէս այն օրը մինչ իրիկուն քաղաքը որանի պէս կորօրուէր և մահմետականները ասդիս անդին կըսէին թէ՛ Մարաշ հայերը զարկեր են, մենք ալ հոս պիտի զարնենք: Գիշերը պահեստի զօրքերը կը պատէին. ժամը 7-ին քսան հատի չափ մարթիի ճայթմունք լսուեցան, կէս ժամ վերջը նորէն 15 հրացանի ձայն եկաւ: Առաւօտ ըլլալով (երկուշաբթի) մահմետականներէն շատերը կը խօսէին թէ այս գիշեր հայերը յարձակում պիտի ընէին մեր թաղերու վրայ զմեզ ջարդելու, բայց չը յաջողեցան. մինչդեռ Յապղար անուն ոստիկանը ըսաւ թէ՛ սուտ է, մենք դիտմամբ նետեցինք. յանցանքը հայերու վրայ պիտի գնենք, և Բ. Գուռն ալ հեռագիր տուինք թէ՛ հայերը յարձակում ըրին, հազարէն աւելի մահմետական ջարդեցին և մզկիթ մը փլցուցին, որ տեղութիւնն ալ (սուլթանը) հրաման տայ սկսին հայերը ջարդել:

Արջապէս այն երկուշաբթի շուկայ եկող քրիստոնեաներ (հայերը) մահմետականներէն ծեծ ուտելով անմիջապէս տուններին փախան, շուկան հայ չը մնաց: Մահմետական հասարակ ժողովուրդը, նախ սկըսաւ զէնք պարունակող խանութները կոտորել և գէնքերը առնել, ըսելով թէ հայոց թաղերը երթալով հայերը պիտի ջարդեն, սակայն 15-ի չափ խանութներ աւար ըրին, բայց կառավարութիւնը երբեք չարգիլեց զիրենք այդ չարագործութենէ, և սկսան ամբողջ հայոց խանութներն աւար ընել: Ստակի և ապրանքի բաւարարները զօրքերը կը յափշտակէին, իսկ մնացեալը թուրք ժողովուրդը. բազմութիւնը անթիւ էր և աւարը սարսափելի. ամէն խանութի դռները որ բահերով կը կոտորէին, «Մուհամմէտէ տէ սէլաւաթ», կը պօռային. իսկ կիները լի, լի, լի (զըլլիթ) կը զարնէին: Այս սարսափելի տեսարանը կը դիտէինք, տեսանք Հասան փաշան բազմութեան մէջ կանգնած կը պօռար, ըրողը գրգռար քէմ աւարալար, գըրք սահաթ մէօհլէթինի վար. կիտինիլ շու մուհալլատարի կեալուրարը պիթիլընիլ պու մալար սիզէ հէլալ օշուռն. բայց ժողովուրդը երբեք մտիկ չըրաւ և ընթացքը շարունակեց. հարկւրապետ մը երեցաւ, չորս հինգ վարկեանի չափ Հասան փաշայի հետ խորհրդակցելէն վերջ հետը եղած զօրքին հրամայեց որ ժողովուրդեան բազ-

մուծիւնը ցրուէ, և սկսաւ պօռալ, «կեամբուրարն մու-
հալէրինէ կիտին ուրն թալան էտին:» Վերջապէս
բռնի սիւնէ իւրով և հրացանի գնդակներով շուկա-
յէն դուրս հանելով զօրքերը բազմութեան հետ միա-
տեղ հայոց թաղերը գնացին. ահա կը լսուի հրացա-
նի ձայներ, «մուհամմէտէ սէլալէթ» և (զըլզիթի) ձայ-
ները երբեք չէին դադարեր: Ժամը չորսէն մինչև ութը
խանութները կողոպտեցին, իսկ 8-էն մինչև 10-ը թա-
ղերուն վրայ յարձակեցան. համախմբեալ հայոց թաղե-
րէն դուրս գտնուող տուններու դռները բահերով կոտորե-
լով ներս մտան, երկի մարդիկը ջարդեցին և տուններու մէջ
գտնուած փողոսները և կարասիքը աւար ըրին. բայց բա-
րեբաղդաբար հայոց տուները չորս հազարի չափ հա-
մախմբեալ ըլլալուն յաջողեցան թէ զօրքը և թէ ա-
րիւնարու ժողովուրդը ետ վանել և մահմէտականք չը
յաջողելով թաղը մտնել զայրութեամբ և սարսափելի ա-
ղաղակներով վերստին շուկայ վերադառնալով աւարի
սկսան: Ասոնց ձեռքէն հազիւ երկու հարիւրի չափ հա-
յոց խանութները աղատ մնացին, իսկ մնացեալ 1,700-
էն ուելի աւարի տուին: Այն երկուշաբթին հայերէն
120-ի չափ մեռեալ և 40-ի չափ վիրաւորեալ, իսկ
մահմէտականներէն 4 մեռեալ և 60-ի չափ վիրա-
ւորեալ, որոնք աւարառութեան միջոցին շատերը զի-
րար վիրաւորած են. իսկ հայոց տուններէն 300-ի չափ
կողոպտուեցաւ: Իրիկունը վերայ հասաւ, արեւ մարը կը
մտնէր այդ մեծ արգելք եղաւ աւարառուներուն, ժա-
մը 4-էն մինչև իրիկուն հազարաւոր լիրաները շահող-
ները հանգիստ քնացան մինչև լոյս:

(Կը շարունակվի)

ՄԵԼՔՈՆ ԿԵՃԵԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ. — *)

1895 թ. Յունիս ամսին վերադառնալով Իսկէնտէ-
րունէն Անտիօք, այս վերջին քաղաքին մօտերը իմ
և երկու ընկերներու դէմը ելաւ ստուար խուճապ մը
թիւրք զաւթիներու և պաշտպանութեան, որ այն
կողմերու պահակներէն էին: Այդ խուճապը յարձակե-
ցաւ մեր վրայ: Իմ վրաս կար խիստ խոշոր գումար
մը և գրեթէ նոյնչափ ալ իմ երկու ընկերներուս
բով, որ կը տանէինք մենք յանձնելու Հնչակեան
Կուսակցութեան Վիլիկիոյ Վարչութեան: Մեր դրու-
թիւնն ուրեմն վտանգաւոր էր կրկնակի կերպով.
մենք ոչ այնքան մեր անձերը պիտի պաշտպանէինք, որ-
քան պիտի ճշտութեամբ և սրբութեամբ կատարէինք
մեր պարտականութիւնը դրամները տեղ հասցունելով:
Թիւրքերու յարձակման մենք սկսանք գիմարել և
մեր կռիւը տեւեց մէկ ժամէն աւելի. անոնք արդէն
սկսած էին նահանջել, որովհետեւ մեր գիրքն աւելի
յարմարաւոր էր կռուի համար, երբ յանկարծ կը տես-
նանք որ մեզ վրայ կը վազեն մեծածիւծ թիւրք զօր-
քեր, որք հրացանի ձայներուն վրայ կուգային: Մենք
անմիջապէս որոշեցինք կերպով մը փախուստ տալ դը-
րամները աղատելու համար: Քշեցի ձիս դէպի լեռ-
ները որք ինձ աղէկ ծանօթ էին. նոյնն ըրին ըն-
կերներս: Երեսունի չափ ձիաւոր ընկան մեր ետեւէն.
ես կըցայ ազատիլ, բայց երկու ընկերներս բռնուեցան
իրենց մօտ եղած դրամներով, նամակներով և զէնքերով:

Հասնելով Վարչութեան մօտ եղելութիւնը պատ-
մեցի և կարգադրուեցաւ, որ ես պիտի երթամ Ան-
տիօք կառավարութեան դռնը և ինքս ըլլալով օտա-

րահպատակ յետ պահանջեմ դրամները:

Անտիօք մտնելուս վրայ, որովհետեւ հագուստս և
գլխարկս եւրօպական էին, թիւրք բազմութիւնը սկսաւ
ինձ հետեւիլ և ոստիկանները միջամտելով զիս տարին
կառավարական դռնը, ուր ալ պիտի երթայի արդէն:
Այնտեղ հասնելուս պէս պահանջեցի որ ամերիկական
հիւպատոսին իմաց տրուի զի ես ամերիկացի քաղաքացի
եմ: Տեղը ամերիկական հիւպատոս չըլլալով հրաւիրուե-
ցաւ անգլիականը և ես ձեռքուցած ըլլալով որ տաճ-
կերէն չեմ գիտեր, այս վերջին հիւպատոսի միջոցով
սկսան զիս հարցաքննել: Հնչակեան Վարչութեան նիս-
տին մէջ որոշուած ըլլալով, որ ես չը պիտի պահեմ
իմ ոճ ըլլալս, բանի որ բռնուած նամակներէն իմացուած
պիտի ըլլայ ամեն բան թէ դրամի և թէ իմ մասին: Ճիշտ
այդ դիմքն ալ բռնեցի հարցաքննութեան միջոցին, ը-
սելով ես Հնչակեան եմ, որ այդ դրամը ես ինքս
ստացած եմ Լոնդոնէն Հնչակեան Կուսակցութեան
Կեդրոնէն, որ այդ դրամը իբր յատկացուած էր Վիլիկիոյ
մէջ կառավարութեան հասցուցած չարիքներէն տա-
ռապող հայերու համար և որ ես անձնապէս պա-
տասխանատու ըլլալով այդ դրամի համար Կեդր-
ոնի և հայ հասարակութեան առջև, կը պահանջեմ
որ այդ դրամները վերադարձնեն ինձ: Ես պահանջեցի
որ տանեն զիս Հալէպ և իմ հիւպատոսի ներկայու-
թեամբ հարցաքննեն և հարկ եղած կարգադր-
ութիւններն ընեն դրամի վերադարձման համար:
Խնդիրն անոր մէջն է որ թիւրք իշխանութիւնները
չուզեցին իմ ամերիկահպատակ ըլլալուս հաւատալ և
Անտիօք ամերիկական հիւպատոս չը լինելով զիս
ձերբակալեցին. ու ըստ դրին, ըսելով որ ես հայ
եմ, խարբերողի և թիւրքահպատակ: Խիստ բողբոնե-
րուս վրայ վերջապէս ճանապարհ դրին դէպի Հալէպ,
սակախ ինչ վիճակի մը մէջ. շղթայակալ, նորանոր
հարցաքննութիւններու ենթարկելով որոնց կը մերժէի
տալ որ և է պատասխան առանց հիւպատոսի ներ-
կայութեան, և ի վերջոյ հասցունելով Հալէպ զիս նետե-
ցին սոսկալի զնդանը: Անտիօքէն Հալէպ դացած ա-
տենս մեծ էր վարմանքս, երբ տեսայ որ ճամբան միա-
ցան ինձ տանող սուարիներուն զօրքերու և զաւթի-
ներու բազմութիւն մը: Վերջն իմացայ որ Սուէտի-
ոյ Հնչակեան «Մարօ» ասպատակային խմբերէն մին փորձ
ըրած էր զիս աղատելու և այդ պատճառաւ էր որ
ինձ տանող սուարիներուն միացան նորերը: Հալէպի
մէջ հակառակ իմ բողբոնելուս և պահանջումներուս
ամերիկական հիւպատոսը չէին կանչեր. շարունակ հար-
ցաքննելով կուզէին իմանալ թէ ուր տարի հետս ե-
ղած դրամը: Իմ մերժողական պատասխանելուս վրայ,
վալին կատղեցաւ և մասնեց զիս տանջանքներու. ապ-
տակներ, ծեծ ամեն օր կը ստանայի, հայհոյանքներ
միշտ ետեւէն և շուտ-շուտ գլխէս ի վար ջուր կը
թափէին, օրական ալ կուտային կտոր մը չոր հաց և
ողտոտ ջուր: Տասնութիւն օր շարունակ այդ վի-
ճակով զնտանի մէջ էի, սաստիկ հիւանդ:
(Շարունակութիւնը յաջորդ համարում)

Մ. Կ.

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ
և դրամ ու ժանդատ ուղարկել հետեւեալ հասցեով.
M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush.
London W. [Angleterre].